Օրինակ նամակի Ասպետութեան։

ԳԼՈՒԽ ԿԳ.

Տեսանելով մեր ընդունելութիւնն ժողովրդեան յաշխարհին փայտակարանոյ և թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ և 'ի վերայ երդման քոյ հաւատացաք հաւատարիմ դու մանասէդ տուրուբերանոյ, և տուաք իշխանութիւն քեզ Տեառն մանասէիդ նամակ Շնորհաց և պաշտօն Ասպետութեան 'ի վերայ ամենայն այր և ձիոյ զօրաց հայոց ժամանակաւ երիս ամաւ, զի դու քաջ մանասէդ հրամայեսցես 'ի վերայ այր և ձիոյ զօրաց նոցայ որ 'ի քաջախոհէն սպարապետէն հայոց քեզ յանձնեցեալ, և տուաք իշխանութիւն քեզ ընթանալ 'ի գործ ըստ հրամանի սպարապետին հայոց ըստ Օրինացն հայաստանեաց տուաք իշխանութիւն քեզ բանիւ և երկաթիւ կապել ամենայն այր ձիոյ զօրաւարաց քեզ յանձնելոց ընդ դէմ քեզ մեղուցելոց, այսմ մտածութեամբ որ հատուցանել պարտիս նոցայ, եթէ կալանաւորն ելցէ 'ի ատենի դատաստանի անպարտ, տուաք իշխանութիւն քեզ կարգադրել թամք և ամենայն հարկաւոր զոր ինչ այր և ձիոյ զինուորաց, որում թեթևացուցանել վաստակն զինուորին և սրնթագնաց պահէ ձիոյն, տուաք իշխանութիւն արձակել 'ի վերայ թշնամու և աշ-